Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 11.03.2022թ. թիվ 2214329254 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<11>> 04 2022թ. 7-13 4096 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Ռոբերտ Զոհրաբյանի ՄԴ/18853-22 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Ավան-Առինջ 1-ին միկրոշրջան 1/10 շենքի 56 բնակարանի բնակիչ Ռոբերտ Զոհրաբյանը դիմումով խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2214329254 որոշումը՝ հայտնելով իր անհամաձայնությունը:

<<Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 49-րդ կետի համաձայն՝ հետընթացն արգելվում է խաչմերուկներում, մերձակա տարածքից ճանապարհ դուրս գալիս և կանոնների 50-րդ կետում թվարկած տեղերում, իսկ 50-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ հետընթացն արգելվում է նաև միակողմ երթևեկությամբ ճանապարհներին:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցը միակողմանի երթևեկությամբ ճանապարհով տրանսպորտային միջոցների հոսքին հակառակ ուղղությամբ (այդ թվում՝ հետընթաց) վարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 3 միավոր:

Իրավախախտումն ամրագրած տեսանյութը հստակ փաստում է, որ 05.03.2022թ-ին՝ ժամը՝ 00:31-ին դիմումատուն Երևան քաղաքի Աբովյան – Թումանյան փողոցների խաչմերուկի հատվածում միակողմ երթևեկությամբ ճանապարհով՝ տրանսպորտային միջոցը վարել է հետընթաց տրանսպորտային միջոցների հոսքին հակառակ ուղղությամբ:

Հարկ է նշել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 14-ին մասի պահանջը խախտելու համար արարքը նվազ նշանակություն ունեցող գնահատելու կարգ սահմանված չէ (դիտավորություն, անզգուշություն և այլն):

Այսպիսով, դիմումատուի արարքում ակնհայտ է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 14-րդ մասի զանցակազմը, հետևաբար նրան վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումն իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 11.03.2022թ. թիվ 2214329254 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման.
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում.
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Ռոբերտ Զոհրաբյանին:

Ե.Կարապետյան

Կատարող Ա.Սահակյան
Հեռ. 060838402